## Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ

# Արտոնագրային հարկի վճարման հայտարարություն

## Օգտվողի ձեռնարկ

# Բովանդակություն

1. Ներածություն ... 3

2. Արտոնագրային հարկ վճարելու հայտարարություն ... 4

1.1 Արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարություն՝ հանրային սնունդ գործունեության դեպքում ... 7

1.2 Արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարություն՝ Թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում գործունեության դեպքում ... 9

1.3 Արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարություն՝ Ավտոբուսով ուղևորափոխադրում գործունեության դեպքում ... 11

1.4 Արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարություն՝ միկրոավտոբուսով ուղևորափոխադրում գործունեության դեպքում ... 14

1.5 Արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարություն՝ Ավտոկանգառ գործունեության դեպքում ... 15

3. **Արտոնագրային հարկ** ենթաբաժին ... 17

3.1 Արտոնագրային հարկի գրանցամատյան ՀՆԷՀ համակարգում ... 18

3.2 Օբյեկտների տվյալներ ... 19

3.2.1 Նոր օբյեկտի գրանցում ... 20

## 1. Ներածություն

Սույն փաստաթղթի նպատակն է ներկայացնել Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի (ՀՆԷՀ) Արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարության ձևը և լրացման կարգը:

Ստորև ներկայացված են այս փաստաթղթի շրջանակներում գործածվող հապավումները:

| ՀԱՊԱՎՈՒՄ | ԱՆՎԱՆՈՒՄ |
|---|---|
| ՀՀ ԿԱ ՊԵԿ | Հայաստանի Հանրապետության Կառավարությանն Առընթեր Պետական Եկամուտների Կոմիտե |
| ՀՆԷՀ | Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ |
| ՕՆՀ | Օբյեկտի Նույնականացման համար |
| ՀՎՀՀ | Հարկ վճարողի հաշվառման համար |
| ՓԳՀ | Փաստաթղթի գրանցման համար |

## 2. Արտոնագրային հարկ վճարելու հայտարարություն

Արտոնագրային հարկ վճարող համարվելու համար՝ հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում հայտարարություն, որը պարունակում է տվյալ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը կամ իրավաբանական անձի անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), գործունեության տեսակը, ելակետային տվյալը, ժամանակահատվածը, որի համար պետք է ստանա արտոնագիր:

Ստորև ներկայացված են հարկ վճարողի կողմից ՀՆԷՀ համակարգում արտոնագրային հարկ վճարելու հայտարարությունը, ՀՀ ԿԱ ՊԵԿ հանձնելու գործընթացը և համակարգի կողմից իրականացվող ստուգումները:

Նախքան Արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարությունը լրացնելը, անհրաժեշտ է ստեղծել համապատասխան օբյեկտ(ներ): Պետք է նշել, որ հետևյալ գործունեության տիպերի համար՝ ավտոբուսով ուղևորափոխադրում, միկրոավտոբուսով ուղևորափոխադրում, թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում, անհրաժեշտ է գրանցել երկու տիպի օբյեկտ.

1. Ավտոբուսով ուղևորափոխադրում գործունեության տիպի համար՝ **Ավտոբուսով ուղևորափոխադրում** օբյեկտ և **Ավտոբուս** օբյեկտ:
2. Միկրոավտոբուսով ուղևորափոխադրում գործունեության տիպի համար՝ **Միկրոավտոբուսով ուղևորափոխադրում** և **Միկրոավտոբուս** օբյեկտ:
3. Թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում գործունեության տիպի համար՝ **Թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում** օբյեկտ և **Թեթև մարդատար ավտոմեքենա** օբյեկտ:

**Արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարությունը** լրացնելու համար անհրաժեշտ է՝

1. Մուտք գործել ՀՆԷՀ՝ լրացնելով **օգտվողի վավեր ծածկանունը, ՀՎՀՀ-ն, գաղտնաբառը** և **անվտանգության կոդը**:
2. **Հաշվետվություններ** բաժնում ընտրել **Հաշվետվությունների ձևեր** ենթաբաժինը:
3. **Արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարությունը** դիտելու և լրացնելու համար անհրաժեշտ է սեղմել նշված ձևի հղումը, որի դեպքում բացվում է հայտարարության մանրամասները պարունակող համապատասխան էջ (տես՝ Նկար 1):




*Նկար 1 Արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարություն*

Օգտվողի կողմից լրացվում են բոլոր պարտադիր դաշտերը՝

1. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ):
2. Հարկ վճարողի անվանումը:
3. Հարկ վճարողի գտնվելու (կազմակերպության դեպքում) կամ բնակության (ֆիզ.անձի դեպքում) վայրը:
4. Արտոնագրային հարկի հաշվետու ժամանակաշրջանը: Տվյալ դաշտը բաղկացած է երկու հատվածից՝ առաջին դաշտում օգտվողը ընտրում է հաշվետու տարին, իսկ երկրորդ դաշտում՝ հաշվետու ժամանակի չափը:
5. Գործունեության տեսակը ավելացնելու համար անհրաժեշտ է ընտրել **Ավելացնել գործունեության տեսակը** դաշտի թափվող ցանկից, որը այնուհետև ինքնաշխատ կլրացվի **Գործունեության տեսակը** դաշտում: Մեկից ավելի գործունեություն իրականացնելու դեպքում կամ նույն գործունեությունը տարբեր վայրերում իրականացնելու դեպքում գործունեության յուրաքանչյուր տեսակը լրացվում է առանձին տողով:
6. Գործունեության իրականացման վայրը ընտրելիս առաջին թափվող ցանկից անհրաժեշտ է ընտրել հետևյալ արժեքներից մեկը՝
   - **Երևան**,
   - **Մարզկենտրոններ**,
   - **Այլ քաղաքներ**,
   - **Այլ վայրեր**,

- **Սահմանամերձ գյուղեր**:

**Երևան** արժեքը ընտրելիս լրացուցիչ ցուցակով կցուցադրվեն հետևյալ արժեքները՝

- **I կամ II գոտի**,
- **Մյուս գոտիներ**:

Մյուս արժեքները ընտրելու դեպքում **Հասցե** դաշտի վերևում հայտնվում է **Սահմանամերձ** նշատուփը: Այն ընտրելու դեպքում արտոնագրի հարկը անկախ ելակետային տվյալից դառնում է **0** դրամ (բացառություն են կազմում **թեթև մարդատար մեքենայով**, **ավտոբուսով** և **միկրոավտոբուսով ուղևորափոխադրում** գործունեությունները): Տվյալ ցուցակում ներկայացված են նաև **Գործող** կարգավիճակ ունեցող օբյեկտները:

7. Ելակետային տվյալի մեծությունը, իսկ չափման միավորը լրացվում է ինքնաշխատ:
8. Գործունեության իրականացման ժամանակահատվածը՝ օրացույցի միջոցով նշվում է ժամանակահատվածի սկիզբը և ավարտը (**dd.mm.yyyy** ձևաչափով):
9. Արտոնագրային հարկի չափը՝ դրամներով: Այն լրացվում է գործունեության իրականացման յուրաքանչյուր տեսակի և գործունեության իրականացման յուրաքանչյուր ժամանակահատվածի համար առանձին-առանձին: Դաշտի արժեքը լրացվում է **Հաշվել** կոճակը սեղմելու արդյունքում:

Արտոնագրային հարկի հաշվարկման գործակիցը և լրացուցիչ գործակիցը լրացվում են ինքնաշխատ:
Ավելացված գործունեության տեսակը հնարավոր է ջնջել՝ սեղմելով  կոճակը:

Հայտարարությունը հնարավոր է պահպանել ժամանակավորապես՝ հետագայում փոփոխություններ կատարելու նպատակով, կամ գրանցել:

Սեղմելով **Պահպանել ժամանակավորապես** կոճակը, համակարգը ստուգում է լրացված դաշտերի ճշգրտությունը և կատարում հաշվարկելի դաշտերի վերահաշվարկ, այնուհետև հայտարարությունը պահպանվում է **Անավարտ հաշվետվություններ** ենթաբաժնում:

Սեղմելով **Գրանցել** կոճակը, համակարգը ստուգում է լրացված դաշտերի ճշգրտությունը, կատարում հաշվարկելի դաշտերի վերահաշվարկ, փոխարկում այն **.pdf** ձևաչափի ֆայլի՝ էլեկտրոնային ձևով ստորագրելու համար, և տեղափոխում **Լրացված հաշվետվություններ** ենթաբաժին:

Հայտարարությունը ստորագրելու համար անհրաժեշտ է արտահանել տվյալ հայտարարությունը, ստորագրել, այնուհետև հետ բեռնել համակարգ:

Տվյալ հայտարարությունը ստորագրելուց և ՀՀ ԿԱ ՊԵԿ հանձնելուց հետո **Լրացված հաշվետվություններ** ենթաբաժնից այն տեղափոխվում է **Հանձնված հաշվետվություններ** ենթաբաժին: Միևնույն ժամանակ բոլոր հանձնված հայտարարությունները հնարավոր է դիտել **Անձնական գրասենյակ** բաժնի **Արտոնագրային հարկ** ենթաբաժնում (տես՝ 3.Արտոնագրային հարկ ենթաբաժին):

Երբ հայտարարությունը ներկայացվում է մինչև գործունեության սկսելու սկզբի օրը՝ համակարգը ցուցադրում է հետևյալ հաղորդագրություն՝ Տվյալ գործունեության իրականացման վայրի (օբյեկտի) մասով նույն հաշվետու ժամանակաշրջանի համար

ներկայացվող հայտարարությունը համարվում է ճշտված հայտարարություն, քանի որ ներկայացվում է մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված նախորդ հայտարարությունում նշված հաշվետուժամանակաշրջանի սկզբի օրվան նախորդող օրը ներառյալ: Տվյալ գործունեության իրականացման վայրի (օբյեկտի) մասով ելակետային տվյալի ավելացման դեպքում՝ հայտարարությունը անհրաժեշտ է ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում՝ մինչև ելակետային տվյալի ավելացման օրվան նախորդող օրը ներառյալ, բայց տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար նախկինումներկայացված հայտարարությունում նշված հաշվետու ժամանակաշրջանի սկզբի օրվանից ոչ շուտ:

Եթե հարկ վճարողն ընդգրկված է ԱԱՀ վճարողների ցանկում նա չի կարող ներակայցնել հայտարարություն Առևտրի իրականացման վայրերում (ոսկու շուկաներում) վաճառասեղանների կամ վաճառակետերի միջոցով թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի կամ թանկարժեք քարերի առք ու վաճառքի գործունեություն իրականացնելու համար:

## 1.1 Արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարություն՝ հանրային սնունդ գործունեության դեպքում

**Հանրային սնունդ** գործունեության դեպքում արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարությունը լրացնելու համար անհրաժեշտ է մուտքագրել հետևյալ դաշտերի տվյալները (տես՝ Նկար 2)՝

1. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ):
2. Հարկ վճարողի անվանումը:
3. Հարկ վճարողի գտնվելու (կազմակերպության դեպքում) կամ բնակության (ֆիզ.անձի դեպքում) վայրը:
4. Արտոնագրային հարկի հաշվետու ժամանակաշրջանը:
5. **Ավելացնել գործունեության տեսակ** դաշտում ընտրել **Հանրային սնունդ** արժեքը:
6. **Գործունեության տեսակ** դաշտում ինքնաշխատ լրացվում է **Հանրային սնունդ** տողը և ակտիվանում է **Ենթագործունեություն** տողի նշատուփերը՝
    - **Ներարտադրական կամ ներտնտեսական նպատակով իրականացվող գործունեություն,**
    - **Բացառապես բացօթյա վայր (բացի հունիս, հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներից իրականցվող գործունեություն),**
    - **Հետապատ և համանման այլ ցուցադրումներ ունեցող հանրային սննդի գործունեության իրականացման վայրեր:**
7. Գործունեության իրականացման վայրը ընտրելիս առաջին թափվող ցանկից անհրաժեշտ է ընտրել հետևյալ արժեքներից մեկը՝

- **Երևան**,
- **Մարզկենտրոններ**,
- **Այլ քաղաքներ**,

- **Այլ վայրեր**,
- **Սահմանամերձ գյուղեր**:

**Երևան** արժեքը ընտրելիս լրացուցիչ ցուցակով կցուցադրվեն հետևյալ արժեքները՝

- **I կամ II գոտի**,
- **Մյուս գոտիներ**:

Մյուս արժեքները ընտրելու դեպքում ***Հասցե*** դաշտի վերևում հայտնվում է **Սահմանամերձ** նշատուփը: Այն ընտրելու դեպքում արտոնագրի հարկը անկախ ելակետային տվյալից դառնում է **0** դրամ: ***Հասցե*** ցուցակից հնարավոր է ընտրել օբյեկտներից մեկը հետևյալ տեսքով՝ Օբյեկտի ՆՀ - Օբյեկտի հասցե:

8. Ելակետային տվյալի մեծությունը, իսկ չափման միավորը լրացվում է ինքնաշխատ:
9. Գործունեության իրականացման ժամանակահատվածը՝ սկիզբը/ավարտը,
10. Արտոնագրային հարկի չափը՝ դրամներով:

Արտոնագրային հարկի հաշվարկման գործակիցը և լրացուցիչ գործակիցը լրացվում են ինքնաշխատ:

Ավելացված գործունեության տեսակը հնարավոր է ջնջել՝ սեղմելով կոճակը:

Հայտարարությունը հնարավոր է պահպանել ժամանակավորապես՝ հետագայում փոփոխություններ կատարելու նպատակով, կամ գրանցել:




*Նկար 2 ԱՀՎ վերաբերյալ հայտարարություն՝ **Հանրային սնունդ** գործունեության դեպքում*

## 1.2 Արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարություն՝ Թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում գործունեության դեպքում

**Թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում** գործունեության դեպքում արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարությունը լրացնելու համար անհրաժեշտ է մուտքագրել հետևյալ դաշտերի տվյալները (տես՝ Նկար 3)՝

1. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ):
2. Հարկ վճարողի անվանումը:
3. Հարկ վճարողի գտնվելու (կազմակերպության դեպքում) կամ բնակության (ֆիզ.անձի դեպքում) վայրը:
4. Արտոնագրային հարկի հաշվետու ժամանակաշրջանը:
5. **Ավելացնել գործունեության տեսակ** դաշտում ընտրել **Թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում** արժեքը:

   - **Գործունեության տեսակ** դաշտում ինքնաշխատ լրացվում է **Թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում** տողը, իսկ **Բնակության միևնույն հասցեում գրանցված վարորդների միևնույն թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում** նշատուփը նշելիս բացվում են **Ավելացնել նոր վարորդ** ենթաբաժնի դաշտերը:

6. Գործունեության իրականացման վայրը ընտրելիս առաջին թափվող ցանկից անհրաժեշտ է ընտրել հետևյալ արժեքներից մեկը՝
   - **Երևան**,
   - **Մարզկենտրոններ**,
   - **Այլ քաղաքներ**,
   - **Այլ վայրեր**,
   - **Սահմանամերձ գյուղեր**:

   **Հասցե** ցուցակից հնարավոր է ընտրել օբյեկտներից մեկը հետևյալ տեսքով՝ Օբյեկտի ՆՀ - Օբյեկտի հասցե:

7. Ելակետային տվյալի մեծությունը, իսկ չափման միավորը՝ **մեքենա**, լրացվում է ինքնաշխատ:
8. Գործունեության իրականացման ժամանակահատվածը՝ սկիզբը/ավարտը:
9. Արտոնագրային հարկի չափը՝ դրամներով:
10. Թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում իրականացնելու դեպքում լրացվում են հետևյալ ենթաբաժինները՝
    - **Թեթև մարդատար ավտոմեքենաների պետհամարանիշները,**
    - **ՀՀ հարկային օրենսգրքի 277-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքում անհատ ձեռնարկատերերի գրանցման (հաշվառման) վայրում (հասցեում) գրանցված (հաշվառված) այլ ֆիզիկական անձանց տվյալները, որոնց համար պետք է կատարվի արտոնագրային հարկի վճարում:**

    **Թեթև մարդատար ավտոմեքենաների պետհամարանիշները** դաշտը բաղկացած է **Բոլոր թեթև մարդատար ավտոմեքենաները** և **Ընտրված թեթև մարդատար ավտոմեքենաները** հատվածներից և ունի հետևյալ կոճակները՝

- Ընտրել բոլորը
- Ընտրել
- Հեռացնել
- Հեռացնել բոլորը

**ՀՀ հարկային օրենսգրքի 277-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքում անհատ ձեռնարկատերերի գրանցման (հաշվառման) վայրում (հասցեում) գրանցված (հաշվառված) այլ ֆիզիկական անձանց տվյալները, որոնց համար պետք է կատարվի արտոնագրային հարկի վճարում** հատվածում լրացվում են միևնույն մարդատար ավտոմեքենայով ուղևորափոխադրում իրականացնող միևնույն հասցեում գրանցված վարորդների տվյալները: Տվյալ հատվածի դաշտերը ակտիվանում են **Գործունեության տեսակ** բաժնում **Բնակության միևնույն հասցեում գրանցված վարորդների միևնույն թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում** նշատուփը նշելիս: Տվյալ ենթաբաժնում անհրաժեշտ է լրացնել որպես վարորդ հաշվառված ֆիզիկական անձի անուն/ազգանունը և գրանցման (հաշվառման) վայրը (հասցեն):

Նոր տող ավելացնելու համար անհրաժեշտ է սեղմել կոճակը:

Ավելացված տողը հեռացնելու համար սեղմել կոճակը:

Ավելացված գործունեության տեսակը հնարավոր է ջնջել՝ սեղմելով կոճակը:

Հայտարարությունը հնարավոր է պահպանել ժամանակավորապես՝ հետագայում փոփոխություններ կատարելու նպատակով, կամ գրանցել:




*Նկար 3 ԱՀՎ վերաբերյալ հայտարարություն՝ **Թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում** գործունեության դեպքում*

## 1.3 Արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարություն՝ Ավտոբուսով ուղևորափոխադրում գործունեության դեպքում

**Ավտոբուսով ուղևորափոխադրում** գործունեության դեպքում արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարությունը լրացնելու համար անհրաժեշտ է մուտքագրել հետևյալ դաշտերի տվյալները (տես՝ Նկար 4Նկար 3)՝

1. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)։
2. Հարկ վճարողի անվանումը։

3. Հարկ վճարողի գտնվելու (կազմակերպության դեպքում) կամ բնակության (ֆիզ.անձի դեպքում) վայրը:
4. Արտոնագրային հարկի հաշվետու ժամանակաշրջանը:
5. **Ավելացնել գործունեության տեսակ** դաշտում ընտրել **Ավտոբուսով ուղևորափոխադրում** արժեքը:
6. **Գործունեության տեսակ** դաշտում ինքնաշխատ լրացվում է **Ավտոբուսով ուղևորափոխադրում** տողը:
7. Գործունեության իրականացման վայրը ընտրելիս առաջին թափվող ցանկից անհրաժեշտ է ընտրել հետևյալ արժեքներից մեկը՝
   - **Երևան**,
   - **Մարզկենտրոններ**,
   - **Այլ քաղաքներ**,
   - **Այլ վայրեր**,
   - **Սահմանամերձ գյուղեր**:

   **Հասցե** ցուցակից հնարավոր է ընտրել օբյեկտներից մեկը հետևյալ տեսքով՝ Օբյեկտի ՆՀ - Օբյեկտի հասցե:
8. Ելակետային տվյալի մեծությունը, իսկ չափման միավորը՝ **ավտոբուս**, լրացվում է ինքնաշխատ:
9. Գործունեության իրականացման ժամանակահատվածը՝ սկիզբը/ավարտը:
10. Արտոնագրային հարկի չափը՝ դրամներով:
11. Ավտոբուսով ուղևորափոխադրում իրականացնելու դեպքում լրացվում են հետևյալ դաշտերը՝
    - Ավտոբուսի հաշվառման համարանիշը,
    - Ավտոբուսի մակնիշը,
    - Ավտոբուսի նստատեղերի քանակը:

    Ավտոբուսի տվյալների բաժինը բաղկացած է **Բոլոր ավտոբուսները** և **Ընտրված ավտոբուսները** հատվածներից և ունի հետևյալ կոճակները՝
    - **Ընտրել բոլորը**
    - **Ընտրել**
    - **Հեռացնել**
    - **Հեռացնել բոլորը**

    **Բոլոր ավտոբուսները** հատվածում ցուցադրվում են բոլոր ավտոբուսների հետևյալ տվյալները՝ **ՕՆՀ - Մակնիշ - Պետհամարանիշ - Նստատեղերի քանակ**:
12. **Ավտոբուսի փոփոխում** նշատուփը նշելուց ակտիվանում են լրացմանը ենթակա հետևյալ դաշտերը՝
    - **Փոխարինվող ավտոբուսի հաշվառման համարանիշ**,
    - **Փոխարինող ավտոբուսի հաշվառման համարանիշ**,
    - **Փոխարինվող ավտոբուսի մակնիշ**,
    - **Փոխարինող ավտոբուսի մակնիշ**,
    - **Փոխարինվող ավտոբուսի նստատեղերի քանակը**,
    - **Փոխարինող ավտոբուսի նստատեղերի քանակը**:

Նոր տող ավելացնելու համար անհրաժեշտ է սեղմել կոճակը:
Ավելացված տողը հեռացնելու համար սեղմել կոճակը:

Ավելացված գործունեության տեսակը հնարավոր է ջնջել՝ սեղմելով կոճակը:
Հայտարարությունը հնարավոր է պահպանել ժամանակավորապես՝ հետագայում փոփոխություններ կատարելու նպատակով, կամ գրանցել:




*Նկար 4 ԱՀՎ վերաբերյալ հայտարարություն՝ **Ավտոբուսով ուղևորափոխադրում** գործունեության դեպքում*

## 1.4 Արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարություն՝ միկրոավտոբուսով ուղևորափոխադրում գործունեության դեպքում

**Միկրոավտոբուսով ուղևորափոխադրում** գործունեության դեպքում արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարությունը լրացնելու համար անհրաժեշտ է մուտքագրել հետևյալ դաշտերի տվյալները (տես՝ Նկար 5Նկար 4Նկար 3)՝

1. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ):
2. Հարկ վճարողի անվանումը:
3. Հարկ վճարողի գտնվելու (կազմակերպության դեպքում) կամ բնակության (ֆիզ.անձի դեպքում) վայրը:
4. Արտոնագրային հարկի հաշվետու ժամանակաշրջանը:
5. **Ավելացնել գործունեության տեսակ** դաշտում ընտրել **Միկրոավտոբուսով ուղևորափոխադրում** արժեքը:
6. **Գործունեության տեսակ** դաշտում ինքնաշխատ լրացվում է **Միկրոավտոբուսով ուղևորափոխադրում** տողը:
7. Գործունեության իրականացման վայրը ընտրելիս առաջին թափվող ցանկից անհրաժեշտ է ընտրել հետևյալ արժեքներից մեկը՝

   - **Երևան**,
   - **Մարզկենտրոններ**,
   - **Այլ քաղաքներ**,
   - **Այլ վայրեր**,
   - **Սահմանամերձ գյուղեր**:

   **Հասցե** ցուցակից հնարավոր է ընտրել օբյեկտներից մեկը հետևյալ տեսքով՝ Օբյեկտի ՆՀ - Օբյեկտի հասցե:
8. Ելակետային տվյալի մեծությունը, իսկ չափման միավորը՝ **միկրոավտոբուս**, լրացվում է ինքնաշխատ:
9. Գործունեության իրականացման ժամանակահատվածը՝ սկիզբը/ավարտը:
10. Արտոնագրային հարկի չափը՝ դրամներով:
11. **Միկրոավտոբուսով** ուղևորափոխադրում իրականացնելու դեպքում լրացվում են հետևյալ դաշտերը՝
    - Միկրոավտոբուսի հաշվառման համարանիշը,
    - Միկրոավտոբուսի մակնիշը,
    - Միկրոավտոբուսի նստատեղերի քանակը:

    Միկրոավտոբուսի տվյալների բաժինը բաղկացած է **Բոլոր միկրոավտոբուսները** և **Ընտրված միկրոավտոբուսները** հատվածներից և ունի հետևյալ կոճակները՝
    - **Ընտրել բոլորը**
    - **Ընտրել**
    - **Հեռացնել**
    - **Հեռացնել բոլորը**

    **Բոլոր միկրոավտոբուսները** հատվածում ցուցադրվում են բոլոր ավտոբուսների հետևյալ տվյալները՝ **ՕՆՀ - Մակնիշ - Պետհամարանիշ - Նստատեղերի քանակ**:

Ավելացված գործունեության տեսակը հնարավոր է ջնջել՝ սեղմելով 🗑 կոճակը:
Հայտարարությունը հնարավոր է պահպանել ժամանակավորապես՝ հետագայում փոփոխություններ կատարելու նպատակով, կամ գրանցել:



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ

| ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՐԿ ՎՃԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | Փաստաթղթի հերթական համարը ______ (լրացվում է հարկային մարմնի կողմից) |
|---|---|
| 1. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | |
| 2. Հարկ վճարողը | |
| 3. Հարկ վճարողի գտնվելու վայրը (բնակության վայրը) | |
| 4. Արտոնագրային հարկի հաշվետու ժամանակաշրջանը | |

Ավելացնել գործունեության տեսակ Միկրոավտոբուսով ուղևորափոխադրում

| Գործունեության տեսակը 5. | Գործունեության իրականացման վայրը 6. | Ելակետային տվյալի մեծությունը 7. | Արտոնագրային հարկի հաշվարկման 8. | | Գործունեության իրականացման ժամանակահատվածի 9. | | Արտոնագրային հարկը, դրամ 10. | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 1) գործակիցը | 2) լրացուցիչ գործակիցը | 1) սկիզբը | 2) ավարտը | | |
| Միկրոավտոբուսով ուղևորափոխադրում | Հասցե | միկրոավտոբուս | | | | | | |

13. Միկրոավտոբուսով ուղևորափոխադրում իրականացնելու դեպքում՝

| N | Միկրոավտոբուսի հաշվառման համարանիշը | Միկրոավտոբուսի մակնիշը | Միկրոավտոբուսի նստատեղերի քանակը |
|---|---|---|---|
| 1 | | | |

**Բոլոր միկրոավտոբուսները՝**

**Ընտրված միկրոավտոբուսները՝**

**Ընտրել բոլորը**
**Ընտրել**
**Հեռացնել**
**Հեռացնել բոլորը**

Հիշել ժամանակավորապես
Գրանցել

*Նկար 5 ԱՀՎ վերաբերյալ հայտարարություն՝ **Միկրոավտոբուսով ուղևորափոխադրում** գործունեության դեպքում*

## 1.5 Արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարություն՝ Ավտոկանգառ գործունեության դեպքում

**Ավտոկանգառ** գործունեության դեպքում արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարությունը լրացնելու համար անհրաժեշտ է մուտքագրել հետևյալ դաշտերի տվյալները (տես՝ Նկար 6Նկար 4Նկար 3).

1. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ):
2. Հարկ վճարողի անվանումը:
3. Հարկ վճարողի գտնվելու (կազմակերպության դեպքում) կամ բնակության (ֆիզ.անձի դեպքում) վայրը:

4. Արտոնագրային հարկի հաշվետու ժամանակաշրջանը:
5. **Ավելացնել գործունեության տեսակ** դաշտում ընտրել **Ավտոկանգառ** արժեքը:
6. **Գործունեության տեսակ** դաշտում ինքնաշխատ լրացվում է **Ավտոկանգառ** տողը և ակտիվանում են հետևյալ տողերի նշատուփերը (կարող են ընտրվել միաժամանակ)՝
   - **Տոնավաճառների, վերնիսաժների, շուկաների, Երևանի կայարանների (ավտոկայարանների), մետրոպոլիտենի կայարանների կամ դրանց անմիջապես հարող տարածքներում գտնվող**
   - **Բացառապես գիշերային ժամերին (ժամը 21:00-ից մինչև ժամը 09:00-ն) աշխատող**
7. Գործունեության իրականացման վայրը ընտրելիս առաջին թափվող ցանկից անհրաժեշտ է ընտրել հետևյալ արժեքներից մեկը՝
   - **Երևան**,
   - **Մարզկենտրոններ**,
   - **Այլ քաղաքներ**,
   - **Այլ վայրեր**,
   - **Սահմանամերձ գյուղեր**:

   **Երևան** արժեքը ընտրելիս լրացուցիչ ցուցակով կցուցադրվեն հետևյալ արժեքները՝
   **- I կամ II գոտի**,
   **- Մյուս գոտիներ**:
   Մյուս արժեքները ընտրելու դեպքում **Հասցե** դաշտի վերևում հայտնվում է **Սահմանամերձ** նշատուփ: Այն ընտրելու դեպքում արտոնագրի հարկը անկախ ելակետային տվյալից դառնում է **0** դրամ: **Հասցե** ցուցակից հնարավոր է ընտրել օբյեկտներից մեկը հետևյալ տեսքով՝ Օբյեկտի ՆՀ - Օբյեկտի հասցե:

8. Ելակետային տվյալի մեծությունը, իսկ չափման միավորը լրացվում է ինքնաշխատ:
9. Գործունեության իրականացման ժամանակահատվածը՝ սկիզբը/ավարտը:
10. Արտոնագրային հարկի չափը՝ դրամներով:

Արտոնագրային հարկի հաշվարկման գործակիցը և լրացուցիչ գործակիցը լրացվում են ինքնաշխատ:
Ավելացված գործունեության տեսակը հնարավոր է ջնջել՝ սեղմելով կոճակը:
Հայտարարությունը հնարավոր է պահպանել ժամանակավորապես՝ հետագայում փոփոխություններ կատարելու նպատակով, կամ գրանցել:




*Նկար 6 ԱՀՎ վերաբերյալ հայտարարություն՝* ***Ավտոկանգառ*** *գործունեության դեպքում*

## 3. **Արտոնագրային հարկ** ենթաբաժին

Բոլոր հանձնված հայտարարությունները հնարավոր է դիտել ՀՆԷՀ համակարգի **Անձնական գրասենյակ** բաժնի **Արտոնագրային հարկ** ենթաբաժնում:

Տվյալ բաժինը բաղկացած է 2 ենթաբաժիններից (տես՝ Նկար 7)՝

1. **Արտոնագրային հարկի գրանցամատյան**
2. **Օբյեկտների տվյալներ**




*Նկար 7* ***Արտոնագրային հարկ*** *ենթաբաժին*

## 3.1 Արտոնագրային հարկի գրանցամատյան ՀՆԷՀ համակարգում

**Արտոնագրային հարկի գրանցամատյան** ենթաբաժնում հնարավոր է որոնել և դիտել արտոնագրային հարկերի հայտարարությունները (տես՝ Նկար 8)։




*Նկար 8 Արտոնագրայի հարկի գրանցամատյան ՀՆԷՀ համակարգում*

Պահանջվող հայտարարությունը որոնելու համար անհրաժեշտ է մուտքագրել հետևյալ (ոչ պարտադիր) դաշտերի տվյանները՝

1. Արտոնագրի համար,
2. Արտոնագրի ամսաթիվ՝ dd.mm.yyyy ձևաչափով,
3. Արտոնագրի ՓԳՀ,
4. Գրանցման ամսաթիվ,
5. Գործունեության տեսակ,
6. ՕՆՀ:

Որևէ դաշտի տվյալ մուտքագրելուց հետո սեղմել **Գրանցել** կոճակը:

Որոնման արդյունքները ցուցադրվում են աղյուսակի տեսքով և պարունակում են հետևյալ տվյալները՝

1. Արտոնագրի ՓԳՀ,
2. ՕՆՀ,
3. Ելակետային տվյալի մեծությունը,
4. Օբյեկտի հասցե,
5. Արտոնագրի համար,
6. Գործունեության կոդ,
7. Գործունեության սկիզբ,
8. Գործունեության ավարտ,
9. Վճարման ենթակա գումար,
10. Հիմք փաստաթուղթ,
11. Գործողություններ՝ **Արտոնագրի PDF**:

Մուտքագրված տվյալները հեռացնելու և կրկին որոնում կատարելու համար անհրաժեշտ է սեղմել **Նոր որոնում** կոճակը:

## 3.2 Օբյեկտների տվյալներ

**Օբյեկտների տվյալներ** ենթաբաժնում հնարավոր է որոնել և դիտել օբյեկտների տվյալները (տես՝ Նկար 9Նկար 9Նկար 7Նկար 8):

Պահանջվող օբյեկտի տվյալները որոնելու համար անհրաժեշտ է մուտքագրել հետևյալ (ոչ պարտադիր) դաշտերի տվյանները՝

1. ՕՆՀ,
2. Օբյեկտի հասցե,
3. Օբյեկտի անվանում,
4. Գրանցման ամսաթիվ,
5. Օբյեկտի տեսակ,
6. Օբյեկտի տիպ՝ **Ցանկացած**, **Տարածք**, **Մեքենա**:

Որևէ դաշտի տվյալ մուտքագրելուց հետո սեղմել **Որոնել** կոճակը:
Որոնման արդյունքները ցուցադրվում են աղյուսակի տեսքով և պարունակում են հետևյալ տվյալները՝

1. ՕՆՀ,

2. Գրանցման ամսաթիվ,
3. Օբյեկտի տեսակ,
4. Օբյեկտի անվանում:

Նոր օբյեկտ գրանցելու համար անհրաժեշտ է սեղմել **Նոր գրանցում** կոճակը:




*Նկար 9 Օբյեկտների տվյալներ*

### 3.2.1 Նոր օբյեկտի գրանցում

Նոր օբյեկտ գրանցելու համար անհրաժեշտ է համապատասխան էջում լրացնել օբյեկտի հետևյալ տվյալները՝

1. Օբյեկտի անվանումը,
2. Գրանցման ամսաթիվը,
3. Օբյեկտի տեսակը,
4. Օբյեկտի տիպը՝ **Տարածք**, **Մեքենա**,
5. Գրանցվող օբյեկտի գտնվելու մարզը (ավտոմեքենայի դեպքում՝ շահագործման մարզը),
6. Գրանցվող օբյեկտի գտնվելու համայնքը (ավտոմեքենայի դեպքում՝ շահագործման համայնքը),
7. Գրանցվող օբյեկտի գտնվելու բնակավայրը (ավտոմեքենայի դեպքում՝ շահագործման բնակավայրը),
8. Գրանցվող օբյեկտի գտնվելու փողոցը՝ առկայության դեպքում,
9. Գրանցվող օբյեկտի գտնվելու շենքը՝ առկայության դեպքում,

10. Գրանցվող օբյեկտի հեռախոսահամարը՝ հետևյալ ձևաչափով +(374)10123456,
11. Գրանցվող ավտոմեքենայի մակնիշը՝ **Օբյեկտի տիպ** դաշտում **Մեքենա** արժեքը ընտրելու դեպքում,
12. Գրանցվող ավտոմեքենայի պետհամարանիշը՝ **Օբյեկտի տիպ** դաշտում **Մեքենա** արժեքը ընտրելու դեպքում,
13. Գրանցվող ավտոմեքենայի պետհամարանիշը՝ **Օբյեկտի տիպ** դաշտում **Մեքենա** արժեքը ընտրելու դեպքում,
14. Գրանցվող ավտոմեքենայի նստատեղերի քանակը՝ **Օբյեկտի տիպ** դաշտում **Մեքենա** արժեքը ընտրելու դեպքում,
15. Նշումներ՝ լրացուցիչ նշումներ ունենալու դեպքում:

Բոլոր պահանջվող դաշտերը լրացնելուց հետո սեղմել **Գրանցել** կոճակը:

Նախորդ էջ վերադառնալու համար սեղմել **Օբյեկտների տվյալներ** կոճակը:




*Նկար 10 Նոր օբյեկտի գրանցում*